

մեն մի հիւանդ վարպետի օդնութեամբ իւր արհեստի համեմատ գերձակութիւն, հիւանութիւն է անում: Արհեստ շիմացողները աշխատում են ծաղկանոցներում և բանջարանոցներում կամ ազիւսի գործարաններում: Որ նոյն հասաւասութեանն են պատկանում: Ամառը բոլոր կարողները մասնակից են գաշտային պարապմունքներին:

Նրանց զբաղեցնում են ոչ իլէ շահադիասկան նպասակներով, այլ բարոյական և բժշկական տեսակէաններով: Այսակը մինչեւ իսկ խստութեամբ պահպանուում է այն սկզբունքը, թէ ծուլութիւնը քրիստոնեայի համար մեղք է: Ոչ ոք նրանց չէ սախպում աշխատել երբ նրանք անկարող են, բայց ձանձրոյթի տանջանքներ էլ չափէաք է ունենան ծուլութիւնից, երբ փոքր ինչ աշխատել կարող են, իսկ թէ շարժումը և մաքուր օդը բժշկականութեան էական մէջոց է՝ անկարոա է բացարութեան: — Այսպիսով տեսնում ենք, որ ներկայ դարու բարեգործութեան մէջ ես նիւթական օգնութիւնը կապուած է, գաստիարակութեան և աշխատանքի գաղափարի հետ ինչպէս քրիստոնեութեան նախին զարդում:

(Կը շարութեակուի)

Դ. Վ.

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՒՆԵՐԻ.

ԿԱԹՈԼԻԿԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՅԻ.

Խնչպէս յայտնի է բանուոր գասակարգը վերջին ժամանակ մեծ խոսքութիւններ հանեց Խոտալիայում կառավարութեան գէմ, այնպէս որ հարկ եղաւ գրեթէ ամրող բանակը ոսքի կանգնեցնել և զէնքի գորութեամբ խաղաղեցնել ապստամբներին: Առանձին հետաքրքրութեան առարկայ է ներկայացնում կաթոլիկ եկեղեցեւոյ բոնած դիբըն այս դէպքում՝ իւր հետեւանքներով:

Խռովութեան զիմանոր կեդրօններից մէկն էր Միլան քաղաքը, որի աբբեսիսկոպոս կարդինալ Արքարքին յայտնի է վաղուց իրու պատկանական համար և կամաց առաջնական առաջնական համար է այսպիսի յայտնի թշնամական ցոյցեր չէր անում: Իւր կառուցեցէք միշտ պապի աշխարհական իշխանութեան համար: Կեցցէ պապ—արքան: Կեցցէ համայնական յեղափոխութիւնը, — Յամենայն գէպս եկեղեցականների մեծամասնութիւնը, եթէ և այսպիսի յայտնի թշնամական ցոյցեր չէր անում: Իւր կառուցեական դիբքով և անտարբերութեամբ ոյժ էր տալիս խոսքութեանը: Ծառ սակաւ էին

երբ ապատամբներն արդէն պատնէշներ կանգնեցրել ու կռուի մէջ էին՝ աբբեսիսկոպոսութ թողեց շատ պաւ քաղաքը և իրու թէ իւր թեմն այցելելու ելաւ: Բնականաբար ամէնքը հաւատացած են, որ նա չէր կամենում քաղաքում մնալով ապատամբների հակառակ քարոզել և յօյս ունէր, որ յեղափոխութիւնը թագաւորական գահը շարժելու ինպատէ և պապական իշխանութիւնը փերականգնելու համար ճանապարհ կհարթէ: Քաղաքից եկած գժիրադդ լուրերը չլսելու էր տալիս նա մինչեւ որ պետ զօրբը զրաւեց կապուցինների մի վանք, ուր ապատամբներն ապատանարան էին գտել, և կալանաւորեց ու խուզարկեց կրօնաւորներին: Այդ ժամանակ նա նամակ գրեց նահանգապետ գեներալ Քավային խնդրելով արձակին կալանաւորուածներին, և ստացաւ մի շատ կտրուկ պատասխան: Որի մէջ գեներալը ցաւ էր յայտնում՝ Մեծն Ամբրոսիոսի յաջորդին այդպիսի գժուարին հանգամանքներում իւր ամեռից հեռացած տեսնելով փոխանակ իւր բոլոր ստորագրեալ հոգեորականների հետ մէկտեղ աջակցելու կառավարութեան, որ եղայրասպան կուռին վերջ դնեն: Աբբեսիսկոպոսի գէմ խիստ զայրացած է նաև նորա թեմի ժողովուրդը: Պապը նորա հասցէին ուղղած մի նամակի մէջ խուլ զըժգութիւն է յայտնում վտանգի ժամին քաղաքից հետանալուն համար, այնուամենայնիւ իւր թեմի տակն է առնում նորան, և առ հասարակ եռանգով պաշտպանում է եկեղեցականներին՝ նոցու գերայ բարգուած մեղադրանքների գէմ: Գերբարին այժմ Հռոմի տիրահուչակ խմբագիրը, որ խոսվութիւնից մի օր առաջ խիստ կծու մեղադրական յօդուածներ էր հրատարակին և ապա փախել: Թէրթը հարկադարձարեցրած է: — Թէ ինչպիսի տրամադրութիւն է իշխում եկեղեցականներից շատերի մէջ՝ օրինակ կարող է համարուել Մեսոպիսա անունով մի քահանայ, որ Զենովայի ճանապարհին զինուորների մի խմբի հետ մրանալով՝ գտատարուում էր ամէն կերպ կառավարութեան ընթացքը, բոլոր շարեաց պատճառ թագ: իշխանութիւնը համարում: յարդորում ապստամբների վերայ հրացան շարձակին, և երբ ձերբակալեցին նորան, բացականչում էր: Վեսուեցէք միշտ պապի աշխարհական իշխանութեան համար: Կեցցէ պապ—արքան: Կեցցէ համայնական յեղափոխութիւնը, — Յամենայն գէպս եկեղեցականների մեծամասնութիւնը, եթէ և այսպիսի յայտնի թշնամական ցոյցեր չէր անում: Իւր կառուցեական դիբքով և անտարբերութեամբ ոյժ էր տալիս խոսքութեանը: Ծառ սակաւ էին

օրինակելի բացառութիւններ, որոնց մէջ աչքի է ընկնում կրկին Արեմանի ազնուախօս և պիտի պահանձնելին, որ բանուարներին, գործատէրներին, մամուլին ուղղած մի շրջաբերականութ ճշմարիտ հոգուն վայել լրջութեամբ, յորդորում է Հայրենիքի շահերը բարձր գասել, բռնի միջոցներից խոյս տալ, պետութիւնը ճանաչել իրեւ օրէնքի և իրաւանց պաշտպան, կատարել նորա և փոխագարձարար միմեանց նկատմամբ ունեցած նուիրական պարտականութիւնները, և միջի այլոց նա առումէ մամուլի համար. Յաւով և զարմանքով տեսայ ես, թէ ինչպէս իրեն կաթողիկական անուանող մամուլի մի, թէ և փոքր, մասը լեզուի սանձարձակութ' ան կողմից մրցում էր Հակակղերական մամուլի հետ և Հաւատը պաշտպանելու ու զիմուն ինչ քրիստոնէական—ու ամկավարական նպատակների ծառայելու համար, գրեթէ գաշնակցում էր ընկերավարականներին, ինչ որ գասակարգերի ճնշման մասին էր խօսում և կառավարութիւնը արհամարհելի դարձնում. Ես ամենայն ազատութեամբ յայտարարում եմ որ ոչ կաթողիկական է, ոչ քրիստոնէական, ոչ մարդասիրական այդ վարմունքը, և որ կրօնը կապ չունի ամեններն կործանման այդ ջանքերի հետ. Աւետարանը, եկեղեցոյ Հայրերը, սուրբերը երբէք արհամարհանք և ապստամբութիւն օրինաւոր իշխանութեան գէմ չեն ուսուցել. Աւմ ձեռքին և լինի իշխանութիւնը՝ Աստուծոց է, և մնկը յարգանք ու հնազանդութիւն ցոյց տալ պարտական ենք. այդ է կաթողիկական վարդապետութիւնը, և ով խօսքով կամ գործով ուրիշ բան է սովորեցնում, ով քօղարկեալ բարուրանքներով կամ յայտնի արհամարհանքով մշտական կարգաւորեալ կորիւ և վարում հրապարակային իշխանութեան գէմ՝ նա կողմնակից չէ Քրիստոսի և նորա եկեղեցւոյց:

Այս շրջաբերականը բաւական ազմուկ հանեց և Հարկաւ անախորժ վիճակի մէջ զրեց ծայրաշեղ կղերականներին, որոնք աշխատում են կամ լուսութեան տալ այն կամ ծարըով անցնել և ցոյց տալ՝ իր եպիտօնութիւն ասածները միայն իւր թէմում եղած ինչ ինչ զիղծումների են վերաբերում անկարելի է իր ենթագրել, որ մի եպիտօնութիւնը է և պաշտպանում էլն. Ինչ և իցէ, այս բոլոր երեսութիւնները ցոյց են տալիս, որ կաթողիկ կղերականութիւնը, ի պաշտպանութիւն պատական իշխանութեան և Հակառակ գահի ընդունակ է նաև յեղափոխութիւնը քաջալերելու:

Սակայն կառավարութիւնն ևս իւր կողմից չի խնայում ազդու միջոցներ ձեռք առնել, այն անցքերը վակելու համար, որոնց միջոցով կղերը իւր Հակառական հայեացքները տարածում էր ժամանակակից մէջ, Այսպէս գաղաքական առաջնորդութիւնը կառավարութիւնը մասին պատմական ծանօթութիւնն կայ միայն 1099 թ.-ից այս կողմէ, երբ առաջին խաչակիրների Երուսաղէմն առած միջոցներ քաղաքի քրիստոնեայ ընակիչները ուրիշ սրբութեանց հետ այդ ևս նոցա հանգել գուրս բերին, և էս գար յետոյ նա անցաւ Ասպոյեան իշխանական տան ձեռքը և 1578 թ.-ից ի վեր

կղերական թէրթեր, լուծուած զանազան թեմական և ծխական ընկերութիւններ, ժողովներ ելն. Այդ ընկերութիւնների մէջ ամենամեծ երից և աչքի ընկնողներից մէկը ու Պետրոսի ակումբան է, որ նպատակ ունի ուխտագնացութիւնը գէպի Հոռով զարգացնել և ամեն զիրութիւններ ընձեռել ուխտագործներին. Հոռով քաղաքագլուխը կանչելով այդ ընկերութիւնը՝ պաշելով նորա խնամքի ներքոյ եւ զող բարեգործական հաստատութիւնները, եպիսկոպոսը բողոքում է այդ կարգագրութեան գէմ, առարկում որ առանց ընկերութիւնն գոյութիւն չեն կարող ունենալ են. բայց Հարկաւ կառավարութիւնը վարուում է այն պէս ինչպէս պետութեան շահերն են պահանջում.

Դոյն ինքն Հումբերա թագաւորը Տուրինի արքա պիտօնուի միջոցաւ մի նամակ է ուղել պապին, որի մէջ բացատրում է, թէ որշաբ հակառակ է կղերականների վարմուկը կաթողիկական սկզբունքներին և պապ. ամոռոի շահերին, և հասկացնում է, որ պապի պաշտպանն էլ թագաւորն է, որ մինչև թագ. պալատը կործանուի՝ վատիկանում քար քարի վերայ չի մնայ, Պապը՝ հակառակ իւր դիւնապետ կարգինալի խորհրդին, ընդարձակ պատասխան է գրել այս նամակին, որի մէջ ասում է, թէ բոլոր խոռովութիւնները նոր հայհցողութիւնների և թագաւորի Հոռոմում իշխելու հետեանքն են, և թէ ինքը գէմ է այդ բոլորին. Նա կնքում է սիրալիր խօսքերով յոյո յայտնելով, որ այդպիսի շփոթութիւններ այլ ևս չեն կրնուի. — Անհամբերութեամբ սպասում են, թէ ինչե՞ր պէտք է պարզուին այն բաղմամիւ թղթակցութիւններից, որոնք կառավարութեան ձեռքն են անցել ձերբակալութեանց միջոցներ, Պետութեան և եկեղեցոյ մէջ յարարերութիւնը խիստ լարուած է ընականարար:

— Կտալիս Տուրին քաղաքում ներկայում տեղի ունեցող ցուցահնոդէսի առթիւ հանգէս է զրուած նաև այդ քաղաքի ամենամեծ սրբութիւնը՝ «Տիրոջ պատանիքը», Թէպէտ մի քանի ուրիշ քաղաքներ ևս ու պատանք ունին, բայց տեղական աւանդութեամբ Տուրինում պահուածը նոյն իսկ այն կտան է, որի մէջ պատած էր Փրկչի մարմինը և պահել է իւր վերայ նորա ամրութ մարմնի զրոշմը՝ վերերի հետքերը, փշեայ պատկի և զիսի մաղերի նշանները ելն. Այդ սրբութեան մասին պատմական ծանօթութիւնն կայ միայն 1099 թ.-ից այս կողմէ, երբ առաջին խաչակիրների Երուսաղէմն առած միջոցներ քաղաքի քրիստոնեայ ընակիչները ուրիշ սրբութեանց հետ այդ ևս նոցա հանգել գուրս բերին, և էս գար յետոյ նա անցաւ Ասպոյեան իշխանական տան ձեռքը և 1578 թ.-ից ի վեր

գտնում է Տուրինում։ Սավոյեան տունը՝ այժմեան հատիկայ թագաւորական ընտանիքը, համարուում է գեղարդ սրբութեան մերձաւոր խնամողն, և միայն այդ ընտանիքի անդամներն իրաւունք ունին նորան անմիջապէս մերձենալու։ ուրիշ բոլոր մահկանացուներին խստի արգելուած է դիպչել նորան։ Ա. պատանքը ի ցոյց և յերկրպագութիւն գրուում է շատ քիչ անգամ, ոտիզրաբար Սավոյեան տան հետ կապուած մի նշանաւոր գեպքի՝ օրթագաֆառանգի պահկադրութեան առթիւ։ Ներկայ թագաֆառանգի Զեղինէ իշխանութուն հետ պահկուելու միջոցին հանգէս չըերուեցաւ նա Տուրինի արքեպիսկոպոսի յատուկ ինդրանօք, որպէս զի ներկայ տարուայ ցուցահանգէսն օգնէ սրբութեան աւելի վարկ և շուք տալու։ Յիշրաւի աշխարհի ամէն կողմերից եկած ուխտաւորների անհամար բազմութիւնը խոնուում է այժմ անդադար Տուրինի մայր եկեղեցւոյ ներսն ու դուրսը։

Ամերիկական եկեղեցական թերթերում շատ է խօսուում վերջին ժամանակ այն յառաջազիմութեան մասին, որ կաթոլիկ եկեղեցին անում է այժմ Միացեալ նահանգների մէջ, նոյն իսկ Բոստոն քաղաքը, որ բողոքականութեան մննդավայրն է եղել միշտ՝ ուր առաջին անգամ հաստատուեցան Անգղիայից հալածուած պուրիտանները, պապականների ձեռքն է անցել ասում են։ Իրաւ է մեծ քանակութեամբ իրլանդացիների գաղթելով կաթոլիկ տարրը բաւական զօրացել է այս տեղերում, բայց բողոքական զլիաւոր թերթերին և համարում են պապականների կողմից արհեստական կերպով ուռցրած չափազանցութիւններ։

Միացեալ նահանգների մի քանի եպիսկոպոսներ վերջերս մի շրջաբերական հրատարակեցին, որով հրապարակային ալզօթքներ են սահմանում սպանացւոց գէմ տարած վերջին յաղթութիւնների առթիւ, և առ հասարակ բուռն հայրենասիրական եռանդ են որտայայտում։ Պապ, աթոռի ներկայացուցիչը Աշխինգտոնում իւր հաւանութիւնն է տուել այդ շրջաբերականին, բայց ասում են՝ նա գաղտնի յանդիմանութիւն կստանայ դորա համար վատիկանից, որ կամենում է խստի չեղոքութիւն պահպանել այս խնդրում։

Հաղորդում են, որ Մագագասկար կղզու մէջ, Ֆրանսիացիների ձեռքն անցնելուց յետոյ կաթոլիկութիւնը շատ արագ կերպով զօրանում է, Անգանարիվ մայրաքաղաքում։ ուր առաջ զուտ բողոքականներ էին, այժմ կաթոլիկները 3000-ից աւելի գալոց յաճախող աշակերտներ ունին, մինչ բողոքականներին 1500-ից պակաս է։ Յիշրուեանները մի բարձր, գալոց են շինում այժմ, որ աւելի արձակ կլինի քան բոլոր բողոքական դպրոցների միասին։

— Ֆրանսիական—բողոքական մի լրագրում հետաքրիր տեղեկութիւններ են հաղորդուած Ֆրանսիոյ կուսանոցների մասին։ որոնցից երեսում է, թէ ինչ փոփոխութիւններ է կրել բարեպաշտութիւնը այս գարու կաթոլիկ Ֆրանսիայում։ 100 տարի առաջ յեղափոխութեան միջոցին այստեղ կային 37,000 միանձնուհիք, 1866 թ.-ին նոցաթիւն արդէն 86,000-ի էր հասնում։ իսկ այժմ արդէն 128,000 է։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

Դերմանիս:

Անետարանական համայնական համառողակր։ — Ահա քանի տարի է մենք հետեւում ենք այս ժողովների ընթացքին՝ համոզուած լինելով ինչպէս աշխատել ենք մի անգամ փոքր ի շատէ ընդարձակորեն բացատրել*, որ ոչ միայն գերմանական այլ և կարելի է ասել ամբողջ քրիստոնեայ քաղաքակիրթ աշխարհը լին զբաղեցնող մի շարք կարեռ խնդիրներ ամենալուրջ կերպով ուշադրութեան են առնուում այստեղ և բոլորիս համար հետաքրիզրական բացատրութիւններ գտնում։ Համաժողովը չորս տարի գուրաց տեղից տեղ փոխադրուելուց յետոյ այս տարի կը ընթիւնի իւր ձննդավայրը՝ Բերլին, վերագածաւ և գումարուեցաւ յունիս 1-3 ին։ Ակամայ հարց պէտք է զարթներ ուրեմն, թէ որչափ փոփոխութիւն է կրել նա այս ժամանակամիջոցում և ինչ համեմատութիւն կայ նորա այժմեան և Բերլինից հեռանալիք ունեցած վիճակի մէջ։ Այդ համեմատութիւնն աննպաստ չէ համաժողովի համար, շնայելով որ նա այս ժամանակամիջոցում շատ արկածների է հանգիստել՝ պետութիւնն առ հասարակ անբարեհաճ կերպով է վերաբերուել գէպի նաև, մի սուուար խումբ բարեկամներ, ինչպէս օր Շտէօկեր և իւրայինք, թողել հեռացել են։ շնայելով նաև, որ համաժողովին մասնակցել չկարողացան նորա մի քանի առաջնակարգ և հասարակութիւն գրաւող ներկայացուցիչները, ինչպէս Յ. Պատներ և Դառնանն, և մի քանի ուրիշ կողմանկի խանդարութիւններ արգելէք էին գործի յաջողութեան, այնուամենայնիւ ժողովականների թիւը հասաւ հետզհետէ նախոնթաց ամենայաջող տարիների շափին։ և ուրեմն համաժողովը վերադարձած եղաւ Բերլին աւելի զօրացած ու ամրացած, առանց կորցնելու իւր եռանդն ու ոգեկորութիւնը, որ զգալի էր հենց նորաբացման միջոցին մըշտական նախագահ նորբերի արտասանած եռանդուն ձաւից։ Իրեն նշան հակագրութիւնների մեղմացման և աւելի խաղաղ ու բարեյաջող ապագայ խօստացող մի պարագայ կարելի է համարել նաև այն, որ ե-

րեք նախարարութեանց ներկայացուցիչներ մասնակցում էին համաժողովին և պյուղիսով մի քանի տարիներէ ի վեր կառավարութեան հետ ընդհատուած կապը կրկն նորոգուեցաւ:

Առաջին օրը՝ յունիսի 2 թիւ կարգացուեցան երկու հրապարակախոսութիւններ, որոնցից մէկի նիւթիւն էր Հաւատերի բանած գիրքը գէպի իւր ժամանակի համայնական շարժումները, միւսին Քանու որական կազմակերպութիւններ, Առաջին հրապարակախոսը, Գրայի վավագի համալսարանի դասախոս լից. Լեցիոնը՝ Նպատակ էր գրել զուտ պատմական հիմունքներով, առանց գեղեցկացնելու պարզել Հուտերի հայեացքները եկեղեցական և աշխարհական իշխանութեանց փոխադարձ յարաբերութեան մասին և նորա թշնամական վերաբերումը գէպի «Գիւղացիների յեղափոխութիւնը», որ պյուղափ յարձակումների և վէճների տեղիք է տուել. Երկրորդը՝ Այցելիքի համալսարանի ուսուցչապետ Շափառ, կամենում էր ցոյց տալ բանուորական ընկերութիւններ կազմակերպելու օգուտը՝ նոցա մէջ բարոյական կեանք և ողջմիտ աշխարահայեցողութիւն զարգացնելու համար, մինչև այդմ այդ նպատակով եղած փորձների թերի կողմերը և ուղղելու միջները, Սակայն համաժողովի ամենից աւելի ուշադրուած և ընդհանուր հետաքրքրութեան արժանի մասը կազմում էր յաջորդ օրուայ Ծիր Վելի Խմբագիր պատոր Ռադէի կարգացած հրապարակախոսութիւնը, որի նիւթիւն էր գործարանական բանուորների կրօնական—բարոյակոն մտածմանց աշխարհը, Հասկանալու համար, թէ ինչու այս խնդրի ուսումնասիրութիւնը չափազանց հետաքրքրական է, պէտք է ի նկատի ունենալ, որ նոյն այն մեր ժողովրդի աւելի միջին գասիր, այդպէս կոչուած ինելիքնենի, մէջ տարածուած և աւելի ու աւելի տարածուող պատմամական գաղափարները կրօնի ու բարոյականութեան մասին՝ Եւրոպյում առորին բանու որդասակարգի մէջ են տարածուած, և որովհետեւ այդ գաղափարը ժողովրդի մի խոշոր մասն է կազմում, այն ամբոխը, որ նոր գաղափարների ազգեցութեան տակ անխօնիմ շարժումներ անել և հասարակական բնոլոր կարգերը, քաղաքակրթութեան բազմաթիւ բարիներ ուստի տակ տակ է սպառնում, ու առի բնական է, որ ժողովրդի խիսկան շահերի համար մտածող և համայնական հարցերին կանոնաօր ուղղութիւն տալ ձգուող մարդկէ աշխատեն ծանօթանալ նորա աշխարահայեցողութեան հետ և իմանալ արդախով թէ որտեղից պէտք է գործ սկսել և ինչպէս յասած տանել, Այս նպատական Ռադէին աշխատել է ժողովի չափուած շտափուած սկսել ու իւր գրուածուած մասին բանուորներից, և այն այլ աշխարհական բնույթի միջները, որ գործուած անձնաւ որութիւնը տածում են սոցիալ-ինքնական աշխարահայեցողութիւնը, բան շտափուած կարծում էին, և նա ինքն այդ յուսատու կողմի հիմն համարում է. ա) պյուղագնքը, որ գէպի Յիսուս Քրիստոսի անձնաւ որութիւնը տածում են սոցիալ-ինքնական աշխարահայեցողութիւնը, անդամաններն անգամ՝ բ) այն աչքի ընկնող նշանակութիւնը, որ տրուումէ արդարութեան և ընկերական սիրոյ գաղափարներին, գ) որուա հետ կապ ունեցող այն հանգամնքը, որ քննազատուումէ ոչ թէ քրիստոնէական բարոյականութիւնը, այլ այն, որ քրիստոնէաներն ըստ արժանուցն չեն կատարում նորա պահանջները. դ) այն սերտ կապը, որ բազմաթիւ բանուորներ պահի կամ վերահաստատել են քրիստոնէական թիւնը հետ, չնայած սոցիալ-ինքնական իշխանութիւնը, Այս զիտուութիւնների վերայ յենուելով նա բանուորական շահաների մտենալու և նոցա վատահութիւնը զէպի քրիստոնէական կրօնը և եկեղեցին զբանելու համար՝ մի քանի առաջար կութիւններ է անում, որոնցից մանաւանգ այն կէտը տաք վէճների առարկայ եղաւ, թէ սատելծագործութեան պատմութիւնը ոչ Գրքի մէջ պէտք է բացարուի ոչ թէ իրեւ մի պատմական տեղեկութիւն աշխարհի սկզբնաւորութեան, այլ իրեւ կրօ-

կտասեների մէկը որ հետզհետէ կտրուում է քրիստոնէան շրջաններից և այդ շրջանի մէջ մտնում. միւսը, որ ըստ ամենայնի պատրաստ է և իւրացրել է բոլորովին այդտեղ իշխող հայեացքները. Երկրորդ մասի մէջ նա յառաջ է բերում մի քաղցուածք այն պատասխաններից, որ նա ստացել է նախօրք առանձին թիւթերով բանուորական շրջանների մտելում ցրուած մի շաբթ հարցերի համար. Այդ հարցերով նա կամինում էր իմանալ թիւթեան և միանալ թիւթեան բնական արժեքների մկրտութիւնն և այլ խորհուրդների և ձեսերի. Աստուածաշնչի, Քրիստոսի Լուտերի, Բատուծաց տրաչագործութեան. Հրաշքների, ընտանիկան կեանքի և ոչլ նման խնդիրների մասին. Ստացուած պատասխանները ցոյց են տալիս, որ բանուոր գաղափարդի մէջ տիրապետում է բնապաշտական աշխարահայեցողութիւնների արած յառաջադիմութեանը, ըստ այդմ և իեանքը սահմանափակուած է համարուում միայն այս աշխարհում, նորա մէջ են տեսնուում բոլոր ձգտելի բարիքները, Բնականարար այստեղ շատ զեր են խաղում զանուան նախապաշտառութեան միավակ և թերի գաղողութիւններ, չշասկացուած մտերի, մարդկային թուլութիւններ և կըթեր, բայց Ռադէի յաջաջ բերած փաստերը աւելի պայծառ և յուսալից գոյներով են պատկերացնուում բանուորների բարոյական-կրօնական աշխարահայեցողութիւնը, բան շտափուած կարծում էրն, և նա ինքն այդ յուսատու կողմի հիմն համարում է. ա) պյուղագնքը, որ գէպի Յիսուս Քրիստոսի անձնաւ որութիւնը տածում են սոցիալ-ինքնական աշխարահայեցողութիւնը, անդամաններն անգամ. բ) այն աչքի ընկնող նշանակութիւնը, որ տրուումէ արդարութեան և ընկերական սիրոյ գաղափարներին, գ) որուա հետ կապ ունեցող այն հանգամնքը, որ քննազատուումէ ոչ թէ քրիստոնէական բարոյականութիւնը, այլ այն, որ քրիստոնէաներն ըստ արժանուցն չեն կատարում նորա պահանջները. դ) այն սերտ կապը, որ բազմաթիւ բանուորներ պահի կամ վերահաստատել են քրիստոնէական թիւնը հետ, չնայած սոցիալ-ինքնական իշխանութիւնը, Այս զիտուութիւնների վերայ յենուելով նա բանուորական շահաների մտենալու և նոցա վատահութիւնը զէպի քրիստոնէական կրօնը և եկեղեցին զբանելու համար՝ մի քանի առաջար կութիւններ է անում, որոնցից մանաւանգ այն կէտը տաք վէճների առարկայ եղաւ, թէ սատելծագործութեան պատմութիւնը ոչ Գրքի մէջ պէտք է բացարուի ոչ թէ իրեւ մի պատմական տեղեկութիւն աշխարհի սկզբնաւորութեան, այլ իրեւ կրօ-

նական վարդապետութիւն կամ քարոզ Արարիչ Աստուծոյ մասին։ Ամենքն ընդունում են, որ այս կէտը գայթակղութեան մի մեծ պատճառ է, որ շատ կիսակիրթ մարդիկ ստեղծագործութեան պատճութիւնը քրիստոնէական կրօնի հիմքնին անհիմն է ու հակառակ գիտութեան բայց ինչպէս սէտոք է գայթակղութեան առաջն առնել՝ այդ նկատմամբ տարրեր կարծիքներ յայտնուեցան և իրեւ միջին ճանապարհ լուգունուեցաւ հետեալ եղբակացութիւնը։ «Համաժողովը եկեղեցւոյ ստիպողական պարտականութիւնն է համարում ցրել այն երեսիթը, իրեւ թէ քրիստոնէական հաւատոր հակառակ է բանուորական ըրջանների գէպի կրթութիւն ունեցած եռանդուն ձգտման, և ամէն միջոց գործ գնել, որպէս զի աւետարանը իւր անհայտութեամբ բոլորովին որոշուի իւրաքանչիւր հին կամ նոր բնական տեսութիւնից։»

Այսպէս գոհարանական աղօթքով փակուեցաւ համաժողովը, ինչպէս և սկսուել էր։ Կոյն օրը Ճաշից յետոյ պրոֆ. Սոգէնի նախագահութեամբ տեղի ունեցաւ «Աւետարանական—Համայնսական կանաց խմբի ժողովը», ուր օր. Մարի Մէլիէն կարդաց անպատճապար և բարոյապէս վտանգուած երիտասարդութեան խնամելու գործի մէջ կանաց ունենալիք մասնակցութեան մասին։

ՄԱՅՐ ԸԹԷՒ.

Նորին վեհափառութիւն Ազգիս Սրբազնագրին Հայրապետը յունիս 20-ին՝ «Գիւտ Եշարաց» տօնին, շքեղ հանդիսով եպիսկոպոսական օծմամբ պատակեց երեք ասձկահպատակ վարդապետների՝ Բարձր. հ. հ. Մազաքիս Տէրունեան, Յովսէփ Սարաջեան և Սահակ Այլատեան։ Պատարագիչ էր Գեր. Արիստակէս և խարտաւիրակ Գեր. Անանիա եպիսկոպոս։ Ապաստորում էին մի քանի վարդապետներ։ Զնայելով որ ձեռնադրութեան լուրը ուշ տարածուեցաւ՝ Երեանից և ուրիշ ըրջակայ տեղերից բաւական մեծ բազմութիւն էր ժողովուել բայց այնչափ որ ներկայ կողոնին այս վաստառը հանդիսի մանրամասնութիւններն աւելի լու դիտել կարող էին, քան եթէ սովորաբար յաջողուում է շատերին՝ ամրոխի չափից աւելի խոնուելուն

պատճառաւ։ Երբ կարգն եկաւ այն հարցման, թէ ինչ վկայագրով են ձեռնադրուում նոր ընծայ եպիսկոպոսները՝ յայտնուեցաւ, որ Տ. Մազաքիս եպիսկոպոս ձեռնադրուում է, առաջնորդ Պարսկաստանի և Հնդկաստանի, Տ. Յովսէփ եպիսկոպոս Ամերիկայի պայմանական հայոց և Տ. Սահակ եպիսկոպոս Արաբաստականի թեմի համար։ Օծման և մատանիների բաշխման կարգը կատարելուց յետոյ վեհափառ Հայրապետը յայտնեց, որ խիստ յոդնած լինելով քարոզ խօսել չի կարող և սիրուած ած է ուրիշ պատեհ առթի թողնել։

Յաջորդ օրը՝ կյարակէ, պատարագիչ էր աւագագոյնը նորընծայ եպիսկոպոսներից՝ Տ. Մազաքիս։ Սրբազնն էր հոգացել նոյն օրու ամբանական սեղանի ծախըր։ Ծաշի միջամբ կարապետ վարդապետ միաբանութիւնների կողմց բարեմազմութիւններին՝ գեր. Մազաքիս եպիսկոպոսի և նորա օծակիցների համար կենաց բաժակ առաջարկեց։ Տ. Մազաքիս սրբազնն պատասխանելով այդ բարեմազմութիւններին՝ ասաց, թէ իւրեն քաջ յայտնի են այն ծանր պարտավիճանութիւնները, որ իւր վերայ դնում է ընդունած բարձր սատիճանը՝ անձնուելը քաջ հովուի պաշտօնը, արզի հանգամանքներում։ բայց երբ վեհափառ Հայրապետը վատահութիւն է ունեցել այս վեհ կոչման հրաւելիելու, յոյս ունի, որ նախախնամութիւնը կարողութիւն պետք է պարզել, կատարելու այն ծանր պարտականութիւնները, և ա. Էջմիածնի միաբանութիւնը որի անգամ զրուեցաւ այս օրից, իւր սրբանուել աղօթքներով պետք է աջակցէ առաջը բացուած ասպարիզի վերայ Սրբազնը կոքեց իւր խօսքը վեհափառ Հայրապետի և միաբանութեան կենացն առաջարկելով։

Հինդշարթի, ա. Սահակայ և Մեսրոպայ տօնին, Օշական և Մեսրոպի շիրմին ուխտ գնացին կրկնին մի խումբ միաբաններ և ծեմարանի աշակերտները։ Պատարագիչ էր Տ. Սահակ նորընծայ եպիսկոպոսը, ժողովուած էր տեղացիների և ուխտաւորների բաւական մեծ բազմութիւն։ Պատարագից յետոյ՝ հոգեկորական դասը, նորընծայ Գեր. Յովսէփ եպիսկոպոսն ի գլուխ խաչի շարական երգելով գո-